### *1.2.3. Շինարարություն*

**Բնակարանային շինարարություն**: 2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում բնակչության, սեփականաշնորհումից ստացված և մարդասիրական օգնության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 15897 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 36 բնակելի շենք կամ 2000թ. հունվար-փետրվարին գործարկված մակերեսի 222,8%-ը, մասնավորապես.

♦***Բնակչության միջոցների*** հաշվին շահագործման է հանձնվել 9287քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 34 նոր բնակելի շենք, որոնցից համապատասխանաբար՝ Աշտարակի տարածաշրջանում՝ 2181 և 10, Արարատի՝ 450 և 3, Կոտայքի՝ 480 և 4, Արթիկի՝ 698 և 3, ք.Գյումրիում՝ 204 և 1, ք.Վանաձորում՝ 974 և 3 և ք.Երևանում՝ 4300 քառ.մ և 10 բնակելի շենք:

♦ ***Սեփականաշնորհումից ստացված միջոցների*** հաշվին ամրացվել է ք. Գյումրիում 3710 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով մեկ բնակելի շենք:

♦ ***Մարդասիրական օգնության միջոցների հաշվին****՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի միջոցների*, շահագործման է հանձնվել 2900 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով մեկ նոր բնակելի շենք:

**Իրականացված կապիտալ շինարարության ծավալը:** 2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում իրականացվել է 4837,0 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 2453,7 մլն. դրամի: Իրականացված կապիտալ շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 4386,6 մլն.դրամ, որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 2090,9 մլն.դրամ:

**2001թ. հունվար-փետրվարին իրականացված կապիտալ շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների**

| Ֆինանսավորման աղբյուրներ | Իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն.դրամ *(փաստացի գներով)* | | Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով | | 2001թ. հունվար-փետրվարը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ, տոկոսներով *(համադրելի գներով)* | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | *այդ թվում՝* շինմոնտաժային աշխատանքներ | Իրականացվել է կապիտալ շինարարություն | *այդ թվում՝* շինմոնտաժային աշխատանքներ | Իրականացվել է կապիտալ շինարարություն | *այդ թվում՝* շինմոնտաժային աշխատանքներ |
| **Ընդամենը** | 4837,0 | 4386,6 | 100 | 100 | 115,6 | 112,0 |
| *այդ թվում ի հաշիվ՝* | | | | | | |
| պետական բյուջեի | 34,0 | 17,5 | 0,7 | 0,4 | 6,4 | 3,4 |
| սեփականաշնորհումից ստացված միջոցների | 32,6 | 29,7 | 0,7 | 0,7 | - | - |
| համայնքների միջոցների | 17,1 | 17,1 | 0,4 | 0,4 | 86,7 | 86,2 |
| Զարգացման և Վերակառուցման Եվրոպական բանկի վարկի | 57,2 | 57,2 | 1,2 | 1,3 | 2 անգամ և ավելի | 2 անգամ և ավելի |
| Համաշխարհային բանկի վարկի | 224,6 | 157,3 | 4,6 | 3,6 | 27,7 | 21,4 |
| Համաշխարհային բանկի գրանտի միջոցների | 6,7 | - | 0,1 | - | 26,3 | - |
| մարդասիրական օգնության միջոցների | 618,9 | 599,1 | 12,8 | 13,6 | 4անգամ և ավելի | 4անգամ և ավելի |
| *դրանից՝* | | | | | | |
| «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների | 1,7 | 1,7 | 0,0 | 0,0 | 30,4 | 30,4 |
| ՄԱԿ-ի միջոցների | 97,4 | 97,4 | 2,0 | 2,2 | 3անգամ և ավելի | 3անգամ և ավելի |
| Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցների | 91,4 | 91,4 | 1,9 | 2,1 | 151,2 | 158,3 |
| փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների | 29,8 | 29,8 | 0,6 | 0,7 | 136,1 | 135,2 |
| հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների | 396,2 | 376,4 | 8,2 | 8,6 | - | - |
| այլ մարդասիրական օգնության միջոցների | 2,4 | 2,4 | 0,1 | 0,0 | 7,5 | 8,5 |

| Ֆինանսավորման աղբյուրներ | Իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն.դրամ *(փաստացի գներով)* | | Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով | | 2001թ. հունվար-փետրվարը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ, տոկոսներով *(համադրելի գներով)* | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդա-մենը | *այդ թվում՝* շինմոնտա-ժային աշ-խատանքներ | Իրակա-նացվել է կապիտալ շինարա-րություն | *այդ թվում՝* շինմոն-տաժային աշխա-տանքներ | Իրակա-նացվել է կապիտալ շինարա-րություն | *այդ թվում՝* շինմոն-տաժային աշխա-տանքներ |
| օտարերկրյա ներդրողների միջոցների | 56,7 | 51,4 | 1,2 | 1,2 | 70,7 | 63,7 |
| կազմակերպությունների միջոցների | 1927,0 | 1685,4 | 39,8 | 38,4 | 126,8 | 120,1 |
| բնակչության միջոցների | 1862,2 | 1771,9 | 38,5 | 40,4 | 181,5 | 178,2 |

**Շինարարության ծավալները 2001թ. հունվար-փետրվարին ըստ տնտեսության ճյուղերի**

*(փաստացի գներով, մլն. դրամ)*

| | Իրականացվել է կապիտալ շինարարություն | | Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով | |
|---|---|---|---|---|
| | Ընդամենը | *այդ թվում՝* շինմոնտաժային աշխատանքներ | Կապիտալ շինարարություն | *այդ թվում՝* շինմոնտաժային աշխատանքներ |
| **Ընդամենը** | **4837,0** | **4386,6** | **100** | **100** |
| *այդ թվում՝* | | | | |
| արդյունաբերություն | 286,9 | 266,8 | 5,9 | 6,1 |
| գյուղատնտեսություն | 226,9 | 152,9 | 4,7 | 3,5 |
| տրանսպորտ և կապ | 1554,0 | 1316,0 | 32,1 | 30,0 |
| առևտուր | 384,9 | 354,1 | 8,0 | 8,1 |
| բնակարանային տնտեսություն | 1451,9 | 1451,9 | 30,0 | 33,1 |
| կոմունալ տնտեսություն | 158,6 | 158,6 | 3,3 | 3,6 |
| առողջապահություն | 18,4 | 15,5 | 0,4 | 0,3 |
| կրթություն | 34,6 | 29,3 | 0,7 | 0,7 |
| մշակույթ | 2,2 | 2,2 | 0,0 | 0,0 |
| տնտեսության այլ ճյուղեր | 718,6 | 639,3 | 14,9 | 14,6 |

## *Շինարարությունն աղետի գոտում*

**Բնակարանային շինարարություն:** 2001թ. հունվար-փետրվարին երկրաշարժից տուժած քաղաքներում և գյուղական վայրերում բնակչության և սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 5586 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 8 բնակելի շենք կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 35,1%-ը, մասնավորապես.

♦ ***Բնակչության միջոցների*** հաշվին շահագործման են հանձնվել 1876քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 7 նոր բնակելի շենք, որոնցից համապատասխանաբար. Արթիկի տարածաշրջանում՝ 698 և 3, ք.Գյումրիում՝ 204 և 1, ք.Վանաձորում՝ 974 և 3 բնակելի շենք:

♦ ***Սեփականաշնորհումից ստացված միջոցների*** հաշվին ամրացվել է ք. Գյումրիում 3710 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով մեկ բնակելի շենք:

**Իրականացված կապիտալ շինարարության ծավալը:**Հանրապետության աղետի գոտում 2001թ. հունվար-փետրվարին բնակելի շենքերի, սոցիալական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման համար ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 511,0 մլն.դրամի կապիտալ շինարարություն կամ հանրապետությունում կատարված շինարարության ընդհանուր ծավալի 10,6%-ը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 128,3 մլն. դրամ (5,2%): Իրականացված կապիտալ շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 507,5 մլն.դրամ, կամ հանրապետությունում կատարված շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր ծավալի 11,6%-ը, որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 128,3 մլն.դրամ (6,1%):

**2001թ. հունվար-փետրվարին հանրապետության աղետի գոտում իրականացված**

## Կապիտալ շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների

*(փաստացի գներով, մլն. դրամ)*

| | Իրականացվել է կապիտալ շինարարություն | | Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով | |
|---|---|---|---|---|
| | Ընդամենը | *այդ թվում՝* շինմոնտաժային աշխատանքներ | Կապի-տալ շինարա-րություն | *այդ թվում՝* շինմոնտաժային աշխատանքներ |
| **Ընդամենը** | **511,0** | **507,5** | **100** | **100** |
| *այդ թվում ի հաշիվ՝* | | | | |
| սեփականաշնորհումից ստացված միջոցների | 29,6 | 26,7 | 5,8 | 5,3 |
| Համաշխարհային բանկի վարկի | 4,3 | 4,3 | 0,8 | 0,8 |
| մարդասիրական օգնության միջոցների | 110,1 | 109,5 | 21,6 | 21,6 |
| *դրանից՝* | | | | |
| «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների | 1,7 | 1,7 | 0,3 | 0,3 |
| Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցների | 91,4 | 91,4 | 17,9 | 18,0 |
| փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների | 4,5 | 4,5 | 0,9 | 0,9 |
| հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների | 11,2 | 10,6 | 2,2 | 2,1 |
| այլ մարդասիրական օգնության միջոցների | 1,3 | 1,3 | 0,3 | 0,3 |
| կազմակերպությունների միջոցների | 128,7 | 128,7 | 25,2 | 25,4 |
| բնակչության միջոցների | 238,3 | 238,3 | 46,6 | 46,9 |